

## Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



# ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #9

Սեպտեմբեր 2020

Երևան, Հայաստան

■ Ներդրումների  
■ Աջակցման  
■ Կենսրոն



# Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Մանրի վերամշակում.....	3
Տեքստիլ արտադրություն .....	6
Շինարարություն .....	10
R&D .....	14
Տեղեկատվական տեխնոլոգիաներ .....	14
Կոսմետիկա .....	16
Առողջապահություն .....	17
Այլ ոլորտներ .....	19
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	24
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	27

# Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-ների միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՅ Հայաստանը ուշադրությանն է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

## Մանդի վերամշակում



## Գործարար համագործակցության առաջարկներ

Հունական ընկերությունը փնտրում է գործակալներ, դիստրիբյուտորներ և ներդրողներ

Կրետե կղզում գտնվող հունական ընկերությունը, որը մասնագիտացած է բարձրորակ առաջին քամվածքի և օրգանիկ առաջին քամվածքի ձիթայուղերի արտադրության և շալցման ոլորտում, փնտրում է գործակալներ, դիստրիբյուտորներ և ներդրողներ՝ իրենց ապրանքների վաճառքն օտարերկրյա շուկաներում խթանելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2f73e68a-7c6d-432b-b3d8-2654efd653db>

Ծածկագիր. BOGR20200528002



Ռումինական գուրմե սուրճի ոլորտում գործող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

**Եվրոպայում՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Ռումինական ընկերությունը փնտրում է բիզնես գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո իրենց ապրանքների վաճառքը այլ երկրներում խթանելու նպատակով: Ընկերությունն առաջարկում է աղացած սուրճի և սուրճի խառնուրդների թարմ տեսականի՝ ողջ աշխարհից:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2df56e84-42ca-4784-b4de-970b945aff24>

Ծածկագիր. BORO20200825001

**Իսպանական ընկերությունը փնտրում է ֆրենչայզ՝ ձեռագործ պաղպաղակի և նրբաբլիթների սրահների համար**

Իսպանական ընկերությունը ֆրենչայզ է, որը հայտնի է իր հեղափոխական ձեռագործ պաղպաղակի արտադրությամբ և վաճառքով: Դրանք արտադրվում են սառեցված հացով՝ -30° ջերմաստիճանի հաստատուն պայմաններում: Այս արվեստի կոնցեպտը ակունքներով Թաիլանդից է: Ընկերությունը փնտրում է ֆրենչայզի գործընկերներ, որոնք տեղում կպատրաստեն ձեռագործ պաղպաղակը և տաք նրբաբլիթները՝ այդ բիզնեսի համար հարմարավետ վայրում և կաշխատեն ողջ տարվա կտրվածքով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/67508be7-d2ec-4737-ab6a-f325673d2cf9>

Ծածկագիր. BOES20190807002



**Մինգապուրյան ընկերությունը, որն արտադրում է սնունդ և խմիչքներ, փնտրում է եվրոպական գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Մինգապուրյան ընկերությունը, որը հիմնադրվել է 1992 թվականին, արտադրում է տարբեր

տեսակի սնունդ և խմիչքներ, որոնք հանդիպում են սուպեր և հիփեր մարկետներում: Ընկերությունը փնտրում է եվրոպական գործընկերներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/190b0a18-e775-472b-8366-74c173cd31ec>

Ծածկագիր. BOSG20200519001

**Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է սառը մզվածքի ձիթայուղ, փնտրում է գործընկեր՝ առևտրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո և առաջարկում է ապրանքներ՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Բուլղարական ընկերությունը, որն արտադրում է սառը մզվածքի չռաֆինացված ձիթայուղ սև չամանից և դոմի սերմերից, փնտրում է գործընկերներ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո և առաջարկում է իր ապրանքներն արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/dbdcabe6-2ded-4603-a134-4ff298b9e192>

Ծածկագիր. BOBG20200803002

**Հացաբուլկեղեն արտադրող ռումինական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Հացաբուլկեղենի ոլորտում գործող ռումինական ընկերությունը, որը գտնվում է Ռումինիայի հարավ-արևմուտքում, արտադրում է հրուշակեղեն և հացաբուլկեղեն, և ցանկանում է ընդլայնել իր միջազգային գործունեությունը: Այդ իսկ պատճառով այն փնտրում է դիստրիբյուտորներ՝ տարածման ծառայությունների ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/03d6287c-a0dd-4e14-843c-64d5088d0e0f>

Ծածկագիր. BORO20200710001

## Գործարար համագործակցության հարցումներ

Հոլանդական ընկերությունը, որը մասնագիտացած է օրգանական և բուսական ապրանքների արտադրության ոլորտում, փնտրում է բիզնես գործընկերներ, ովքեր, արտադրական համաձայնագրերի ներքո, կարող են արտադրել բուսական դետերսիվներ

Հոլանդական ՓՄՁ-ն, որը ցանկանում է ստեղծել բուսական դետերսիվների հոսքագիծ՝ դրանք Նիդերլանդների մանրածախ կետերին (ինչպիսիք են՝ Albert Heijn-ը, Jumbo-ն և Superunie-ը)

ներկայացնելու համար, փնտրում է եվրոպական գործընկերներ, որոնք կարող են արտադրել բուսական արտադրանք և առաջարկել արտադրական համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/45c45f58-2eb0-4038-b737-d35f73eb2cd1>

Ծածկագիր. BRNL20200827001

Սուրճի ոլորտում գործող ռումինական ընկերությունը փնտրում է կանաչ սուրճի մատակարարներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է կանաչ սուրճի մշակման ոլորտում, փնտրում է նոր մատակարարներ: Ընկերությունը ցանկանում է հաստատել երկարատև համագործակցություն տարածման ծառայությունների համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e9f1be34-2cd3-4ceb-bc07-2d639cdada6f>

Ծածկագիր. BRRO20200825001

## Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

**Չուգագուլպաներ և գուլպաներ արտադրող հունգարական ընկերությունն առաջարկում է իր արտադրանքը՝ արտադրական, առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների ներքո**

Հունգարական ընկերությունը տեքստիլի ոլորտից, մասնագիտացած է գուգագուլպաների և գուլպաների արտադրության ոլորտում: Այն փնտրում է դիստրիբյուտորներ կամ վաճառքի մենեջերներ՝ իր գործունեությունն արտերկրում ընդլայնելու նպատակով: Այն նաև բաց է արտադրական համաձայնագրերի համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f7cf0006-bb95-45d3-8c90-f53c8cc3b13b>

**Ծածկագիր. BOHU20200810001**

**Ընկերությունը Միացյալ Թագավորությունից արտադրում է խելացի հարմարավետ հագուստ խողովակներով կերակրվող երեխաների համար**

Դիզայներական ընկերությունը Միացյալ Թագավորությունից, որն արտադրում է հարմարավետ, նորաձև զգայական հագուստ՝ առողջական պատճառներով խողովակով սնվող երեխաների հարմարավետությունն ապահովելու համար, փնտրում է դիստրիբյուտորներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/12f73db0-3eb6-4bc5-adc1-f93cec9aa8f3>

**Ծածկագիր. BOUK20190830001**

**Կարի արտադրության ոլորտից ուկրաինական ընկերությունը, որը մասնագիտացած է տղամարդկանց, կանանց հագուստի և աշխատանքային հագուստի արտադրության ոլորտում, փնտրում է արտադրական, ենթաապայմանագրային կամ տարածման ծառայությունների մատուցման համաձայնագիր:**

Ուկրաինական կարուձևի ոլորտի ընկերությունը, որը տեղակայված է Լվովում (Լեհաստանի սահմանից 60 կմ հեռավորության վրա), մասնագիտացած է կանանց և տղամարդկանց հագուստի արտադրության մեջ, ներառյալ բաձկոններ, անձրևանոցներ, վերարկուներ, ինչպես նաև թեթև տեսականի՝ զգեստներ, կիսաշրջազգեստներ, վերնաշապիկներ: Ընկերությունն ունի նաև աշխատանքային հագուստի արտադրության փորձ: Ընկերությունը պատրաստ է աշխատել արտադրական, ենթաապայմանագրային կամ տարածման ծառայությունների համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/80c6cebd-8ad9-44e6-8b7f-271d5da23440>

**Ծածկագիր. BOUA20200812001**




**Կանանց հագուստի արտադրության մեջ մասնագիտացած ուկրաինական ընկերությունը գործընկերներ է փնտրում տարածման կամ արտադրական համաձայնագրերի ներքո**

Ուկրաինական ընկերությունն արտադրում է կանացի հագուստ: Ընկերությունը զարգանում և արագ աճում է՝ շնորհիվ եզակի նմուշների և մրցունակ մատչելի գների: Ընկերությունը ցանկանում է համագործակցել տարածման ծառայությունների համաձայնագրերի կամ արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7cfb6b7f-d06b-4f2e-88fe-4e022deae763>

Ծածկագիր. BOUA20200605003



**Աշխատանքի, ժամանցի և բացօթյա կիրառման համար ավանդական, խիտ, բարձրորակ բրդյա գուլպաների ֆիննական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ, առևտրային գործակալներ, դիլերներ և (կամ) մանրածախ ցանցեր:**

Ավանդական, խիտ բրդյա գուլպաների ֆիննական արտադրողը փնտրում է դիստրիբյուտորներ, առևտրային գործակալներ, դիլերներ և (կամ) մանրածախ ցանցեր: Ընկերությունն առաջարկում է բարձրորակ բրդյա գուլպաներ յունիսեքս՝ 37-55 չափսերով, 9 գույներով: Առկա են ինչպես սովորական, այնպես էլ՝ երկար գուլպաներ: Գուլպաները հյուսվում են ավանդական



տրիկոտաժային մեքենաներով և ավարտին են հասցվում ճշգրիտ ձեռագործ աշխատանքով:Ընկերությունն արտադրում է նաև անհատական պիտակներ՝ հարմարեցված գույներով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d6885f02-593c-472b-9e73-a5fbb9b4ae5a>

Ծածկագիր. BOFI20200618001



**Պաշտպանիչ աշխատանքային հագուստ և սարքավորումներ առաջարկող սերբական ընկերությունը փնտրում է արտադրական, տարածման ծառայությունների կամ համատեղ ձեռնարկության համաձայնագրեր**

Սերբական ընկերությունն արտադրում է բարձրորակ աշխատանքային համազգեստ և պաշտպանիչ սարքավորումներ՝ առողջապահության, ոստիկանության, բանակի, հասարակական սննդի, խոհարարության, շինարարության և ծանր արդյունաբերության ոլորտների աշխատողների համար: Այն ներառում է հագուստ և աքսեսուարներ, ինչպիսիք են՝ ձեռնոցները, դիմակները, դիմապանակները, սաղավարտները, ակնոցների հավաքածուները: Ընկերությունը պատրաստ է ընդլայնել իր շուկան արտադրական, տարածման ծառայությունների կամ համատեղ ձեռնարկությունների համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/17a8e851-156d-4f09-a72f-84f5c15d07c9>



Ծածկագիր. BORS20200817001

## Գործարար համագործակցության հարցումներ

Կանանց հագուստի մի քանի խանութներ ունեցող լիտվական ընկերությունն առաջարկում է տարածման ծառայությունների համաձայնագիր՝ կանանց նորաձևության հետ կապված իրեր արտադրողների համար

Կանանց և աղջիկների համար զգեստներ ստեղծող և սեփական խանութներում վաճառող լիտվական ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր տեսականին: Հետևաբար ընկերությունը փնտրում է կանանց և աղջիկների զգեստներ, վերնաշապիկներ, շապիկներ, կիսաշրջագգեստներ, զուգագուլպաներ, պայուսակներ, կանանց նորաձևության այլ պարագաներ արտադրողների Եվրոպայում: Ընկերությունն առաջարկում է տարածման ծառայությունների համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/c5d202c1-0d61-4914-b5b7-efd8453ed8c1>

Ծածկագիր. BRLT20200508001

Կաշվե պայուսակներ և պարագաներ արտադրող իտալական ընկերությունը փնտրում է զինվորական վարագույրների գործվածքներ արտադրողներ

Իտալական մի ընկերություն, որը մասնագիտացած է կաշվե պայուսակների և արքեսուարների նախագծման և արտադրության մեջ, փնտրում է զինվորական վարագույրների գործվածքներ արտադրողների, որոնք պետք է օգտագործվեն իրենց արտադրատեսակներում: Ընկերությունը փնտրում է մատակարարման համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0b33b7cf-8dd4-490e-ac38-fe46d53068db>

Ծածկագիր. BRIT20200521001

## Շինարարություն



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Միացյալ Թագավորությունում արտադրված նշագրության ոլորտի համար նախատեսված սուսինձների և կնիքների համար ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մասնագիտացած է դեկորատիվ նյութերի և շինանյութերի մատակարարման ոլորտում, ներառյալ՝ սուսինձների և կնիքների լայն տեսականի: Այն ցանկանում է ընդլայնել շուկան արտերկրում՝ բարձր ամրության ակնթարթային ամրացնող սուսինձի համար, որը հատկապես հարմար է նշանները և այլ նման իրերը ուղղահայաց մակերևույթներին փակցնելու համար: Վերջինս չի թույլ տալիս նաև սայթաքթել:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fa5d82ac-32e0-4e8c-beec-17330b36155c>

Ծածկագիր. BOUK20200818001

### Բազալտ, անդեզիտ, դիաբազ և մարմար արտադրող թուրքական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտոր կամ առևտրային գործակալության համաձայնագիր

Թուրքական ընկերությունն արտադրում է բազալտ, անդեզիտ, դիաբազ, մարմար և հիմնադրվել է 1986 թվականին Թուրքիայում: Ընկերությունը, որն արտահանում և ներմուծում է մարմար, գրանիտ, անդեզիտ և կիսաթանկարժեք քարեր, ոլորտում գործում է ավելի քան 30 տարի: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորի կամ առևտրային գործակալության համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1cd0f676-ee1a-452d-848e-b8741933c0c7>

Ծածկագիր. BOTR20200806001

### Նոր սերնդի հիբրիդային տարանջատիչ արտադրող լեհական ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագիր

Լեհական արտադրողը, որը գտնվում է Լեհաստանի հարավարևելյան տարածաշրջանում, մասնագիտացած է կեղտաջրերի մաքրման կայանների, տարանջատիչների (ճարպ և ածխաջրածիններ), պոմպակայանների և անձրևաջրերի բաքերի արտադրության ոլորտում: Հետագա զարգացման համար ընկերությունը փնտրում է տարածման ծառայությունների համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f8976011-2c22-44be-b8cd-17e66768694d>

Ծածկագիր. BOPL20200805001

**Լիտվական ընկերությունն առաջարկում է պատուհանների և դռների արտադրություն և փնտրում է միջազգային գործընկերներ՝ տարածման ծառայության կամ ենթապայմանագրով աշխատելու համար**

Լիտվական ընկերության գործունեությունն է՝ եվրոպական և սկանդինավյան տիպի փայտե և ալյումինով ամրացված փայտե պատուհանների, դռների, շարժողական համակարգերի և այլ շինությունների նախագծումը, արտադրությունը և տեղադրումը: Հնարավոր համագործակցությունը կարող է լինել տարածման ծառայության կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/71813921-630a-42c8-a9f1-86423b6e4794>

Ծածկագիր. BOLT20200724001



**Պոլիվինիլ քլորիդե (ՊՎՔ) դռների և պատուհանների պարագաներ արտադրող թուրքական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և արտադրական գործակալներ**

Թուրքական ՓՄՁ-ն, որը գործում է դռների և պատուհանների արտադրողների ոլորտում և փորձ ունի ՊՎՔ դռների և պատուհանների արտադրողների արտադրության ոլորտում, ինչպիսիք են՝ շարժիչները, ծխնիները, միակցիչները, դռների և պատուհանների բռնակների խմբերը, էսպագնոլետի համարժեքները և զարկանները, փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործակալներ: Ոլորտային փորձառու ընկերությունը կարող է այդ ապրանքներն արտադրել ըստ հաճախորդի պահանջների, ինչպես նաև արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0c766a36-3c90-45fc-a3f3-0f8c11ec681d>

Ծածկագիր. BOBG20200731002

**Մետաղամշակման գործունեության մեջ մասնագիտացված բուլղարական մետաղամշակող ընկերությունը փնտրում է ենթապայմանագրային համաձայնագրեր**

Բուլղարական ընկերությունը, որը մասնագիտացած է մետաղամշակման արդյունաբերության, պողպատի թիթեղների մեխանիկական վերամշակման, կտրման, կռման, ձևավորման, CNC դակման, CNC պլազմայի կտրման, եռակցման, մետաղական արտադրանքի փոշով ծածկելու աշխատանքներ իրականացնելու, ինչպես նաև ծրագրային ապահովման արդյունաբերական ծառայությունների ոլորտում, փնտրում է եվրոպական գործընկերներ՝ ենթապայմանագրային կամ արտադրական համաձայնագրերի համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fbef6d9e-0990-452f-aecb-2c29b4e9e6a3>

Ծածկագիր. BOBG20200731002

**Գործարար համագործակցության հարցումներ**

Իսրայելական ներկայացուցչական ընկերությունը, որը մասնագիտացած է էներգետիկայի, փոխադրումների, թունելների, ենթակառուցվածքների և ստորգետնյա ծրագրերի նախագծերի կառավարման/ինտեգրման ոլորտում, փնտրում է առևտրային գործակալության համաձայնագիր:

Իսրայելական ընկերությունը, որը մեծ փորձ ունի էներգետիկայի, տրանսպորտի, թունելների, ենթակառուցվածքների և ստորգետնյա ոլորտներում նախագծերի կառավարման, համակարգման և ինտեգրման ոլորտում, փնտրում է օտարերկրյա գործընկերներ, ովքեր կարիք ունեն տեղական ներկայացուցչի այդ ոլորտներում: Ակնկալվող գործընկերության նպատակն է՝ օտարերկրյա գործընկերոջը/մասնագետին օժանդակել տեղական մրցույթների մրցակցության/ մասնակցության գործընթացում և երկու կողմերին հնարավորություն տալ փորձ, գիտելիքներ, առաջադեմ մոտեցումներ ձեռք բերել: Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության համաձայնագիր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ab5c5961-5585-48e6-a99b-d02ea6de432e>

Ծածկագիր. BRIL20191226001

**Ֆրանսիական շինարարական ընկերությունը փնտրում է հողմաբեկ պատնեշի եվրոպական մատակարար**

Ֆրանսիական շինարարական ընկերության հարավ-արևմտյան մասնաճյուղը, որը հանդիսանում է եվրոպական առաջատար շինարարական և շինարարական խմբավորումներից մեկի դուստր

ձեռնարկությունը, փնտրում է հողմաբեկ պատնեշ արտադրող: Ընկերությունը փնտրում է մատակարարման համաձայնագիր եվրոպական գործընկերների հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/2e5d4c59-7149-4d1d-82e8-979077c98a40>

Ծածկագիր. BRFR20200724002

## R&D



**Իսպանական ընկերությունը գործընկերներ է փնտրում ոչ պայմանական այլընտրանքի հետագա մշակման համար Eurostars ծրագրին դիմելու նպատակով**

Իսպանացի սկսնակ ընկերությունը, որը մասնագիտացված է քամուց էլեկտրաէներգիայի ստացման համակարգերի ոլորտում, փնտրում է գործընկերներ, որոնք փորձ ունեն կինետիկ և մեխանիկական էներգիան էլեկտրաէներգիայի վերածման ոլորտում՝ ոչ սովորական այլընտրանք ստեղծելու համար: Հիմնական նպատակն է՝ կատարելագործել ընթացիկ փոխարինիչը դրա արդյունավետությունը բարձրացնելու և էլեկտրաէներգիայի արտադրությունն առավելագույնի հասցնելու համար: Որոնվող համագործակցության տեսակը հետազոտական համագործակցության համաձայնագիր է՝ մասնակցելու համար Eurostars-ին:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/5ab34075-5d43-4696-bf66-259b0914fea5>

Ծածկագիր. RDES20200722001

## Տեղեկատվական տեխնոլոգիաներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

### Դանիական ընկերությունն առաջարկում է աութոքրսինգ՝ վիրտուալ և լրացված իրականության արտադրանքի համար

Դանիական արագ աճող լայնամասշտաբ արտադրական ստուդիան, որը մասնագիտացած է վիրտուալ և լրացված իրականության (VR/AR) բովանդակության և ծրագրերի ոլորտում, զբաղված է բարձրակարգ բովանդակության արտադրության մեջ՝ օգտագործելով 360 աստիճանի վիդեո և 3D անիմացիաներ: Իր ընդլայնումը շարունակելու համար ընկերությունը փնտրում է մասնավոր և պետական հատվածից գործընկերներ, այդ թվում՝ ընկերություններ, ուսումնական հաստատություններ և թանգարաններ՝ աութոքրսինգի համաձայնագրի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/409b7445-ff3b-4c49-b37a-49e60b8254bf>

Ծածկագիր. BODK20200903001

### Մակեդոնական ապարատային և ծրագրային ապահովման ոլորտի ընկերությունն իր ծառայություններն է առաջարկում առևտրային գործակալության, աութոքրսինգի կամ ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո

Մակեդոնական S2S ընկերությունն առաջարկում է ապարատային և ծրագրային ապահովման զարգացման ծառայություններ: Ընկերության մշակողների թիմը լայն փորձ ունի բազմաթիվ տեխնոլոգիաների ոլորտում և փորձ ունի միջազգային նախագծերում: Ընկերությունն առաջարկում է իր ծառայություններն առևտրային գործակալության, աութոքրսինգի և ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/f5546d13-fd92-4758-b32f-37b33409237a>

Ծածկագիր. BOMK20200731001

## Գործարար համագործակցության հարցումներ

---

## Ռումինական ընկերությունը մատակարարման պայմանագրի ներքո փնտրում է տելեմատիկ և IoT սարքերի մատակարարներ

Ռումինական նորարարական ընկերությունը, որը մասնագիտացած է ընդհանուր շարժական ծառայությունների ոլորտում, մշակել է գույքային ամպային տեխնոլոգիա՝ արդյունաբերության լայն տեսականու շարժական ծառայությունների կառավարման համար, ինչպիսիք են՝ ավտոմոբիլայինը, քարփուլինգը, տաքսին, փոխադրումը, բեռնափոխադրումը, առաքումը, շարժիչները, հեծանիվը և այլն: Ընկերությունը մատակարարման համաձայնագրի ներքո որոնում է հեռահաղորդակցման և IoT սարքերի՝ կարգավորիչների և սենսորների հուսալի մատակարարներ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/0ac84e79-7924-470d-aca8-82e862df0d5d>

Ծածկագիր. BRRO20200729001

## Կոսմետիկա



Business Support on Your Doorstep

## Գործարար համագործակցության առաջարկներ

---

Ռումինական սկսնակ գործարարը, որը մասնագիտացած է ձեռագործ բնական օձառների և կոսմետիկայի արտադրության մեջ, փնտրում է դիստրիբյուտորներ

Ռումինական նորաստեղծ ընտանեկան ընկերությունը, որը մասնագիտացած է նարդուսից բնական կոսմետիկայի արտադրության մեջ, ինչպիսիք են՝ օձառները, մարմնի կարագը և յուղերը, փնտրում է գործընկերներ՝ տարածման ծառայության պայմանագրի ներքո համագործակցություն հաստատելու համար: Ապրանքի բոլոր բանաձևերը պարունակում են բարձրորակ սերտիֆիկացված բնական բաղադրիչներ, վերջնական արտադրանքը փորձարկված և անվտանգ. դրանց մասին տեղեկատվությունը առկա է Եվրոպական հանձնաժողովի պորտալում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6a39220a-8e5f-4f8e-95b3-a2585586648c>





**Կոսմետիկայի ոլորտում մասնագիտացված իսպանական լաբորատորիան փնտրում է տարածման պայմանագրեր**

Կոսմետիկայի ոլորտում գործող իսպանական լաբորատորիան արտադրում է դեմքի, մարմնի և մազերի խնամքի միջոցներ փոքր կոսմետիկ արդյունաբերությունը միավորելով դեղագործի աշխատանքների հետ: Ընկերությունը Եվրոպայում փնտրում է դիստրիբյուտորներ, հանրախանութներ, մանրածախ վաճառողներ և դեղատներ՝ տարածման համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/b37c87ac-2180-4582-9af8-b7dd8c9d613f>

Ծածկագիր. BOES20200709003

**Առողջապահություն**



**Գործարար համագործակցության առաջարկներ**

**Ֆրանսիական հետազոտական ընկերությունը փնտրում է արտադրական/ ենթապայմանագրային համաձայնագրեր**

Ֆրանսիական CRO-ն (պայմանագրային հետազոտական կազմակերպություն) առաջարկում է բարձրարժեք պատվերով ծառայություններ հակամարմինների, վերամշակվող սպիտակուցների,

պլազմիդների և վեկտորների, բջիջների, իմունային վերլուծությունների և կենսազննումների մշակման, ինժեներացման և արտադրության համար: Ընկերությունը փնտրում է նոր արտադրական և ենթապայմանագրային համաձայնագրեր ընկերությունների կամ համալսարանների կամ հետազոտական այն հաստատությունների հետ, որոնք աշխատում են կենսատեխնոլոգիաների, ախտորոշման, առողջապահության, կոսմետիկայի, դեղագործության ոլորտներում և պատրաստ են նոր փորձարկումներ կատարել կամ հավաքածուներ մշակել:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a46b6f95-38d5-49e5-ba06-11c5a36b9350>

Ծածկագիր. BOFR20200731001

**Չեխական դիստրիբյուտոր ընկերությունը Եվրոպայում գտնվող արտադրողներին առաջարկում է շատ բարձրորակ բետա-գլյուկան՝ որպես դեղագործական և սննդային հավելանյութ: Ընկերությունն առաջարկում է համագործակցել ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:**

Չեխական ընկերությունը բաղադրիչներ է մատակարարում դեղագործական և սննդային հավելանյութերի արտադրություններին, և ներկայումս այն առաջարկում է բարձր մաքրության բետա-գլյուկանի փոշի: Որոնվող գործընկերները Եվրոպայում դեղագործական և սննդային հավելանյութեր արտադրողներ են, որոնք կցանկանան արդիականացնել իրենց արտադրանքը բարձրորակ բաղադրիչով: Գործընկերությունն ակնկալվում է ենթապայմանագրային համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/1fc55b13-a955-4fff-bc97-a3c523638fd9>

Ծածկագիր. BOCZ20190905001

**Ընկերությունը Միացյալ Թագավորությունից փնտրում է առևտրային գործակալներ՝ առողջապահական կանխատեսման պլաստֆորմի ընդլայնման նպատակով**

Ընկերությունը Միացյալ Թագավորությունից մշակել է բժշկական առողջության կանխատեսման պլաստֆորմ և ցանկանում է առևտրային գործակալության համաձայնագիր ձեռք բերել՝ նոր տարածաշրջաններ մուտք գործելու նպատակով: Ընկերությունը ցանկանում է ընդլայնել իր պլաստֆորմը դեղագործության և առողջության ապահովագրության ոլորտում՝ աջակցելով կլինիկական փորձարկումների՝ տարբեր փուլերում որոշումների կայացմանը կամ ռիսկի գործոնների հիման վրա երկարակետության կանխատեսմանը:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/14308439-f46b-489a-938e-eea08c2e4a5a>

Ծածկագիր. BOUK20190813003

**Վերքերը բուժող միջոցներ արտադրող ռուսական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ռուսական հետազոտական ընկերությունը, որը մասնագիտացած է վերքերի բուժիչ դեղամիջոցների արտադրության մեջ, որը հիմնված է օբսիդացված դեքստրանի ակտիվ նյութի վրա, հետաքրքրված է տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/e310c4f4-c704-4cb0-9419-974c17a890c7>

Ծածկագիր. BORU20190111003

## Գործարար համագործակցության հարցումներ

**Դեղագործական արտադրանքի բնագավառում մասնագիտացած բելգիական առևտրային ընկերությունը փնտրում է դեղագործական արտադրանք և բժշկական սարքեր, որոնք մատակարարվելու են դեղատներին և հիվանդանոցներին:**

Ներմուծման/արտահանման ոլորտից բելգիական առևտրային գործակալությունն ակտիվ գործունեություն է ծավալում դեղագործական արտադրանքի՝ առանց դեղատոմսի (OTC) և պարաֆարմացման արտադրանքի և բժշկական սարքավորումների ոլորտում, որոնք տարածում կամ վաճառում են դեղատներում և հիվանդանոցներում: Ընկերությունը կցանկանա համագործակցություն զարգացնել դեղագործական արտադրանք/բժշկական սարքեր արտադրողներ ընկերությունների հետ: Ընկերությունը բաց է տարածման կամ մատակարարման համաձայնագրերի համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/16ae81b7-2b5c-49ee-826d-34264bdcfdd9>

Ծածկագիր. BRBE20200603001

## Այլ ոլորտներ



## Գործարար համագործակցության առաջարկներ

**Ավստրիական ՓՄՁ-ն արդյունաբերական ծառայություններ է առաջարկում օգտակար հանածոների, քարի արդյունահանման և հանքարդյունաբերության ոլորտում գործող ընկերություններին (ծառայությունների համաձայնագիր)**

Ավստրիական ՓՄՁ-ն ծառայություններ է մատուցում այն ընկերություններին, որոնք գործում են քարի հանքավայրում, լեռնահանքային և հանքային ապրանքատեսակների արդյունահանման ոլորտում՝ սկսած շահագործման պլանի մշակումից, լիցենզավորման և թույլտվության գործընթացի խորհրդատվությունից, ուսումնասիրման և հանքաքարի հորատման տեխնոլոգիայից, վերջացրած հանքային շուկայի ուսումնասիրությամբ. համագործակցությունն ակնկալվում է ծառայությունների մատուցման պայմանագրի շրջանակներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6989d073-abc6-48e9-ad93-72ee89406dfe>

Ծածկագիր. BOAT20200902001

**Սլովակյան ընկերությունը, որը մասնագիտացած է ներարկային ձուլման և ջերմափոխանակման տեխնոլոգիաներով պլաստմասե արտադրանքների արտադրության ոլորտում, առաջարկում է իր արտադրական կարողությունները**

Ներարկային ձուլման և ջերմափոխանակման տեխնոլոգիաներով պլաստմասե արտադրանքների արտադրության ոլորտում գործող սլովակյան ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ արտադրական համաձայնագրերի կամ ենթապայմանագրերի ներքո համագործակցելու նպատակով: Ընկերությունն առաջարկում է իր անվճար արտադրական կարողությունները պլաստմասե արտադրանքների արտադրության համար, ինչպիսիք են արդյունաբերական և տեխնիկական ձուլվածքները, ցածր լարման փորձարկիչները, խաղալիքները, ձուլվածքները և գործիքները և այլն:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4b277fdc-63e1-47db-ab93-373b62b6ec52>

Ծածկագիր. BOSK20190905001

**Ռումինական ՓՄՁ-ն, որն արտադրում է տարբեր տիպի ֆիլմեր, փնտրում է նոր միջազգային գործընկերներ՝ ենթապայմանագրային համաձայնագրի ներքո համագործակցելու նպատակով:**

Ռումինիայում տեղակայված ստեղծագործական կինոարտադրող ընկերությունը, որը գործում է նոր մեդիայի և ստեղծագործական արդյունաբերության մեջ, արտադրում է ֆիլմեր, գովազդներ, վավերագրական ֆիլմեր, առցանց վիդեո բովանդակություն, օդային նկարահանումներ, տեսաֆիլմերի արտադրություն և ցանկացած տեսակի վիդեոարտադրություն, փնտրում է նոր գործընկերներ արտերկրում՝ կինոնկարների և լրատվամիջոցների արտադրության հետ կապված մեդիա ընկերության հետ համաձայնագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BORO20200814001

**Կոշտ կահույք, սպորտային սարքավորումներ և փայտե այլ իրեր արտադրող լիտվական ընկերությունն առաջարկում է արտադրություն և ենթապայմանագիր**

Ներքին կենցաղային և առևտրային տարածքների, սպորտային սարքավորումների և փայտե այլ իրերի պինդ կահույքի լիտվացի արտադրողը փնտրում է օտարերկրյա գործընկերներ և առաջարկում է արտադրություն և ենթապայմանագրային ծառայություններ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ddc816c6-c452-4ecd-ab89-400f91a458f2>

Ծածկագիր. BOLT20190307001

**Բուխարիներ, վառարաններ և ներդիրներ արտադրող ֆրանսիական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ**

Ֆրանսիական մի ընկերություն, որը հիմնադրվել է 1976 թվականին և գտնվում է Ֆրանսիայի կենտրոնում, մասնագիտացած է բարձրորակ բուխարիների, վառարանների և ներդիրների (փայտ, գազ և էթանոլ) արտադրության մեջ: Ընկերությունը փնտրում է տարածման համաձայնագրեր:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/53a875fe-33bc-4d0e-9656-5989b57134e8>

Ծածկագիր. BOFR20200903001



**Ռումինական գովազդային ընկերությունը, որը նաև արտադրում է նշաններ, լուսատուներ և վաճառքի կետերի համար նյութեր, ցանկանում է բացահայտել միջազգային գործընկերների՝ արտադրական համաձայնագրի կամ ենթապայմանագրային համաձայնագրի ներքո**

Ռումինական ընկերությունը գովազդային և արտադրական գործակալություն է, որը գտնվում է Ռումինիայի հյուսիս-արևելյան մասում: Հիմնվելով շուկայում առկա օգտագործված տեխնոլոգիաների մշտական թարմացման վրա՝ ընկերությունն առաջարկում է ամբողջական լուծումներ՝ գրաֆիկական դիզայնից, տեքստից, պատկերից, տպագրության պատրաստումից մինչև ստեղծումը և հավաքումը: Ընկերությունը շահագրգռված է միջազգային

համագործակցություն հաստատել արտադրական կամ ենթապայմանագրային համաձայնագրի շրջանակներում:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/d28bd855-4ab0-4dcc-9724-b514d30ecf72>

Ծածկագիր. BORO20190110002

**Պոլիպրոպիլենային մեծ պայուսակների լիտվացի արտադրողը (Ճկուն միջանկյալ բեռների համար նախատեսված տարաներ), փնտրում է առևտրային միջնորդներ և առաջարկում է ենթապայմանագրային համագործակցություն**

Ընկերությունը Լիտվայից ներգրավված է բարձրորակ մեկանգամյա օգտագործման կամ բազմակի օգտագործման մեծ պայուսակների (Ճկուն միջանկյալ բեռների համար նախատեսված տարաներ) արտադրության մեջ: Ընկերությունը ցանկանում է ավելի շատ ընդլայնվել արտերկրում և փնտրում է առևտրային միջնորդներ (գործակալներ և դիստրիբյուտորներ)՝ իր արտադրանքի համար՝ առևտրային գործակալության կամ տարածման ծառայությունների համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով: Արտադրողն առաջարկում է մեծ տարաների արտադրության ծառայություններ՝ իբրև ենթակապալառու:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/7a4d8b7c-d108-4959-ae12-cd79b14c0926>

Ծածկագիր. BOLT20190911001

**Քաղաքացիական նպատակներով պայթուցիկ նյութեր արտադրող լիտվական ընկերությունը փնտրում է առևտրային միջնորդներ**

Լիտվական ընկերությունը պայթուցիկ նյութեր է արտադրում քաղաքացիական օգտագործման համար (պայթուցիկ նյութեր և էմուլսիայի մատրիցա): Ապրանքներն օգտագործվում են պայթեցման, աշտարակների քանդման, շենքերի քանդման և այլնի համար: Ընկերությունն առաջարկում է իր արտադրանքը և փնտրում է առևտրային միջնորդներ, ովքեր պետք է աշխատեն առևտրային գործակալության համաձայնագրով կամ տարածման ծառայությունների համաձայնագրով: Արտադրական պայմանագիրը և ենթապայմանագիրը նույնպես կարող են բանակցության առարկա լինել:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/fad2ef8a-fa4d-4256-bf34-d98cc58f95cc>

Ծածկագիր. BOLT20200901001

## Գործարար համագործակցության հարցումներ

**Բելգիական ընկերությունը փնտրում է EVA (Էթիլենային վինիլացետատ) փրփրային արտադրանքի արդյունաբերական արտադրող:**

Նորածինների և մանկական տարատեսակ ապրանքների բելգիական արտադրողը և դիստրիբյուտորը փնտրում է խաղալիքների արտադրության համար Էթիլենային վինիլացետատ (EVA) փրփուրի հուսալի արտադրող: Ընկերությունը ցանկանում է երկարաժամկետ արտադրական պայմանագիր կնքել նման արտադրողի հետ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/ee3be439-9bb2-490d-be9d-0539c0f69e8c>

Ծածկագիր. BRBE20200831001

**Դանիական ընկերությունը փնտրում է ճենապակյա իրերի փաթեթավորում**

Դանիայից դիզայնի և արտադրության ընկերությունը, որը վերջնական օգտագործողների համար վաճառում է տարբեր ճենապակյա արտադրանք, որոնում է այդ իրերի համար փաթեթավորում արտադրողներ: Դանիական ընկերությունը մշակել է ճենապակյա իրերի շարք, որոնք կուղարկվեն վերջնական օգտագործողներին: Պատվերի չափը սովորաբար կազմում է շուրջ 2000 կտոր փաթեթավորում՝ մեկ պատվերի համար: Դանիական ընկերությունը հետաքրքրված է արտադրական համաձայնագրով:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/6587aff9-bf11-4fac-9f6b-4e6c9c19eb9f>

Ծածկագիր. BRDK20200904002


**Գործվածքի կենցաղային տեքստիլի ոլորտում մասնագիտացած ռումինական արտադրողը փնտրում է կանեփաթելի մանվածք՝ արտադրական համաձայնագրերի ներքո համագործակցելու նպատակով**

Ռումինական ընկերությունը, որը մասնագիտացած է ձեռագործ կենցաղային տեքստիլի արտադրության ոլորտում (օրինակ՝ սփռոցներ, վարագույրներ, անկողին և բարձերի ծրարներ), արտադրում է այդ ապրանքները բամբակից և կանեփաթելից: Ընկերությունը հետաքրքրված է բարձրորակ չսպիտակեցված կանեփաթելի մանվածք մատակարարող միջազգային բիզնես գործընկերների հետ համագործակցությամբ: Համագործակցությունը գործընկերների հետ հնարավոր է արտադրական համաձայնագրերի ներքո:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/4a038187-27ee-4f0d-b285-469f97df085b>

Ծածկագիր. BRRO20190408001

# Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



## Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

**Ջրածնի վառելիքի բջիջների, էլեկտրոլիզատորների և օքսիդափոխման հոսքի մարտկոցների գերթեթև, ամուր, բարակ և բարձր հաղորդչի կոմպոզիտային երկբևեռ թիթեղներ**

Ֆրանսիական նորաստեղծ ընկերությունը մշակել է նորարարական գործընթաց՝ արտադրելու համար կոմպոզիտային վառելիքի բջիջների երկբևեռ թիթեղներ ավելի նուրբ, թեթև և ավելի դիմացկուն, քան ցանկացած այլ մատչելի նյութեր: Այն հիմնված է ճկուն կոմպոզիտային ջերմակոմպրեսիոն գործընթացի վրա, որի պարամետրերը կարող են ճշգրտվել ըստ վերջնական կիրառման: Ընկերությունը փնտրում է տեխնիկական համագործակցություն վառելիքի բջիջների, էլեկտրոլիզերների և օքսիդացման մարտկոցներ արտադրողների հետ: H2020/Europe հետազոտական համաձայնագիր ևս որոնվում է տեխնոլոգիայի հետագա բարելավման համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/52064d52-1ccc-4d11-953d-13b851c8574a>

Ծածկագիր. TOFR20200820001

**Սննդամթերքի և մանկական ապրանքների ախտահանման տեխնոլոգիա ունեցող իսպանական ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ իր տեխնոլոգիայի արդյունաբերականացման և առևտրայնացման համար:**

Իսպանական ընկերությունը, որը գործում է էլեկտրաբժշկական ոլորտում, ստեղծել է փոքր չափերի սննդամթերքի տարաների ախտահանման տեխնոլոգիայի նախատիպ: Վերջինս



հատկապես հարմար է կրծքով կերակրման համար նախատեսված սարքավորումների ախտահանման համար, բայց հավասարապես արդյունավետ է նաև թարմ բուսական սննդի ախտահանման համար՝ մինչև դրա օգտագործումը: Ընկերությունը փնտրում է գործընկեր, որը պատասխանատու կլինի արտադրանքի արդյունաբերականացման և առևտրայնացման, դրա արտադրության կազմակերպման և շուկա դուրս գալու համար:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/68fe929f-3922-4a4a-89f2-9ef9e51ecc27>

Ծածկագիր. TOES20200828001

## Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

**Մարտկոցների ինելաջի համակարգ՝ էլեկտրական տրանսպորտային միջոցների արագ լիցքավորման համար էլեկտրաէներգիա հավաքելու և խտացնելու նպատակով**

Լեհական ընկերությունն առաջարկում է էլեկտրաէներգիայի լայն ծառայություններ և փնտրում է գործընկեր, որը կմշակի մարտկոցների էլեկտրական էներգիայի պահպանման նախատիպ՝ երկկողմանի փոխարկիչի հիման վրա: ՓՄՁ-ն փնտրում է լավ փաստաթղթավորված փորձով գործընկեր՝ էներգիայի կուտակման և տարածման հետ կապված լուծումներ տալու հարցում: Համագործակցության իդեալական ձևը կարող է լինել առևտրային համաձայնագիրը՝ տվյալ սարքավորման արտադրության տեխնիկական օժանդակությամբ:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/603d3389-1a97-4b6d-a0bc-055138c649f2>

Ծածկագիր. TRPL20200723002

**Հոլանդական ընկերությունը փնտրում է SS-լուծումներ ոչ շոշափելի ճանապարհորդության և հարմարություններ մուտք գործելու համար՝ Covid-19 վարակի ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով:**

Հոլանդական ընկերությունը գործում է կոնորցիումի շրջանակներում և փնտրում է SS-ի վրա հիմնված տեխնոլոգիաներ և փորձաքննություն՝ կենսաչափական և առանց հպման ճանապարհորդական գործիք մշակելու նպատակով: Ընկերությունը համագործակցություն է փնտրում ստեղծագործական և տեխնիկական գործընկերների հետ, ինչպիսիք են նորաստեղծ ընկերությունները և նախատեսում է առևտրային համաձայնագիր տեխնիկական օժանդակությամբ, լիցենզիայի կամ տեխնիկական համագործակցության համաձայնագրով: Այս հարցումը բաց նորարարական մարտահրավերի մի մասն է:

<https://een.ec.europa.eu/tools/services/PRO/Profile/Detail/a59ab201-530e-4ecd-bc1c-47c903e05044>



## Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2020 թ. -ի հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների ընթացքում կազակերպվող միջոցառումները:

### Հոկտեմբեր

01/10/2020	<b>TORINO FASHIONMATCH 2020</b> <b>Թուրին (Իտալիա)</b>  Torino FashionMatch 2020 միջոցառումը այն նորարարական և միջազգային ձևաչափն է, որը նպաստում է նորաձևության արդյունաբերության մեջ բիզնես համագործակցության համաձայնագրերի կնքմանը:  <a href="https://torino-fashionmatch-2020.b2match.io/home">https://torino-fashionmatch-2020.b2match.io/home</a>
05/10/2020	<b>Photonics4Agrifood – Վիրտուալ աշխատաժողով և համագործակցության հաստատման միջոցառում</b> <b>Թուրին (Իտալիա)</b>  Միջոցառումը, որը ծրագրավորվել է Եվրոպական H2020 NextPho21 ծրագրի շրջանակներում, ֆոտոնային տեխնոլոգիաների մատակարարների և գյուղատնտեսական ոլորտի պոտենցիալ վերջնական օգտագործողների, ինստիտուցիոնալ և տարածքային դերակատարների և ֆինանսավորող

	մարմինների միջև հանդիպումների հնարավորություն է:
14/10/2020	<p><b>Marketplace Austria Food 2020</b> Վիեննա (Ավստրիա)</p> <p>Marketplace Austria Food 2020-ն արդեն ավելի քան 10 տարի է ինստիտուցիոնալ հաստատություն է դարձել: Այն բացառիկ հնարավորություն է սննդի և խմիչքների գնորդների համար՝ այցելել Ավստրիա: Եկեք և ստացեք Ավստրիայի «համը»՝ Ավստրիայի նորարար մատակարարների, սննդի և խմիչքների արտադրողներին հանդիպելիս:</p> <p><a href="https://food2020.b2match.io/">https://food2020.b2match.io/</a></p>
18/10/2020	<p><b>SIAL 2020</b></p> <p>SIAL-ը աշխարհի առաջատար սննդի արդյունաբերության ցուցահանդեսներից է, որը տեղի է ունենում Փարիզում երկու տարին մեկ անգամ: Գնորդների գրանցումը և մասնակցությունն անվճար է:</p>

## Հոկտեմբեր

01/10/2020	<p><b>MEDICA Healthcare Brokerage Event Virtual</b></p> <p><b>Գերմանիա (Ղյուսելդորֆ)</b></p> <p>Նպատակը՝ ձեռնարկություններին, համալսարաններին և հետազոտական հաստատություններին աջակցելն է՝ Եվրոպայում գործընկերներ գտնելու հարցում գործարար համագործակցության, արտադրանքի զարգացման, արտադրության և լիցենզավորման պայմանագրերի, համատեղ ձեռնարկությունների կամ գործընկերության այլ տեսակների շրջանակներում:</p> <p><a href="http://www.medica-tradefair.com/">http://www.medica-tradefair.com/</a></p>
------------	--

**ԱՎԱԳ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ \_ SENIOR EXPERTEN SERVICE (SES)**

SES ծրագրի առավելությունները

- Մասնագետների վերապատրաստում, ուսուցում, որակավորում
- Ծառայությունների մատուցման, արտադրական գործընացի բարելավում, օպտիմալացում
- Տեխնիկական, արտադրական, կազմակերպչական խնդիրների լուծում
- Երկար տարիների փորձ ունեցող մասնագետների միջնորդում
- Խորհրդատվություն տնտեսության ավելի քան 50 ճյուղերի համար
- Ուղարկված հարցմանը համապատասխան աջակցություն, խորհրդատվություն Ովքե՞ր կարող են օգտվել SES ծրագրից
- Փոքր ու միջին ձեռնարկությունները տնտեսության ամենատարբեր ոլորտներից
- Հանրային և բժշկական հիմնարկները
- Կրթական ձեռնարկությունները
- Հիմնադրամները

SES ծրագրի ֆինանսավորումը

Պատվիրատուն պարտավորվում է ստանձնել Հայաստանում նախատեսվող ծախսերը՝ կացարան, օրական 3 անգամ սնունդ, օրական 5 եվրոյին համարժեք ՀՀ դրամ որպես գրպանի փող:

Գերմանական կողմն իր վրա է վերցնում ինքնաթիռի տոմսի և ապահովագրության ծախսերը:

Հետաքրքրե՞ց Ձեզ: Հարցերի դեպքում կարող եք դիմել Հայաստանում Ավագ փորձագետների ծառայության ներկայացուցիչ Մարիամ Մաժինյանին:

Հեռ.՝ +374 95 12 84 87

E [mariam.mazhinyan@armenien.ahk.de](mailto:mariam.mazhinyan@armenien.ahk.de)

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁեՑ Հայաստան:

**Նշում:** *Եթե Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել Ձեռնարկությունների եվրոպական ցանց Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

*Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են:*

Այս տեղեկաթերթի մեջ տեսակետները պատկանում են հեղինակին և պարտադիր չէ, որ արտահայտեն Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալության, Եվրոպական Հանձնաժողովի կամ այլ եվրոպական կառույցների տեսակետը: Փոքր և միջին ձեռնարկությունների գործադիր գործակալությունը, Եվրոպական Հանձնաժողովը կամ դրանց կողմից գործող որևէ անձ պատասխանատու չէ տեղեկաթերթում պարունակվող բովանդակությունն օգտագործվելու դեպքում: